# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏԾՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 7(14), 30 նոյեմբերի, 2018թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



Նոյեմբերի 10-ին Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարար, ՌԴ ոստիկանության գեներալ Վլադիմիր Կոլոկոլցևը հանդիպեց Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Վալերիյ Օսիպյանի հետ:

Ողջունելով հայ գործընկերոջը՝ Ռուսաստանի ՆԳՆ ղեկավարը նշեց, որ իրենց երկրներին միավորում են պատմական ամուր արմատներն ու երկարամյա գործընկերային հարաբերությունները, այդ թվում և իրավապահ ոլորտում:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին հետագայում էլ ամրապնդել համագործակցությունը առկա և նոր քրեական մարտահրավերների ու սպառնալիքների դեմ պայքարի շրջանակում:

Երկկողմ փոխգործակցության արդյունավետ գործիքներից մեկն էլ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության միավորված կոլեգիան է: Վլադիմիր Կոլոկոլցևը համոզմունք հայտնեց, որ Կոլեգիայի հերթական նիստը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին, ինչպես միշտ, կանցկացվի բարձր մակարդակով:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին միջպետական օպերատիվ-կանխարգելիչ «Որոնում» գործողությանն ու Ինտերպոլի շրջանակներում համատեղ գործունեությանը վերաբերող հարցեր: Վլադիմիր Կոլոկոլցևը պատրաստակամություն հայտնեց շարունակել հայ մասնագետների ուսուցումը գերատեսչական ուսումնական հաստատություններում՝ բարձրագույն կրթության ծրագրերով, ու որակավորման բարձրացման դասընթացներում՝ հանցավորության դեմ պայքարի առանցքային ուղղություններով:

Արդյունավետ փոխհամագործակցության կարևոր նախաձեռնություն էր նաև 18-ից 21-ը Դուբայում (ԱՄԷ) ընթացող Ինտերպոլի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում ՀՀ պատվիրակության ղեկավար, ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի հանդիպումն Ինտերպոլի գլխավոր քարտուղար Յուրգեն Շտոկի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ինտերպոլի ուղիներով իրականացվող համագործակցությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ Ինտերպոլի տվյալների պահոցներ մուտքի հնարավոր ընդլայնման, հետախուզվող անձանց հայտնաբերման, անդրազգային հանցավորության դեմ պայքարին վերաբերող խնդիրներ և այլն:

Վալերիյ Օսիպյանը կարևորեց Ինտերպոլի դերը և պատրաստակամություն հայտնեց աջակցել Ինտերպոլի գործունեությանը: Ինտերպոլի գլխավոր քարտուղարն իր



հերթին բարձր գնահատեց ՀՀ դերակատարությունը և ակտիվ մասնակցությունը Կազմակերպության նախաձեռնություններին և ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանին պաշտոնապես հրավիրեց Ինտերպոլի գլխավոր քարտուղարություն՝ անձամբ ծանոթանալու Կազմակերպության կարողություններին: Հանդիպումն անցավ ջերմ ու գործընկերային մթնոլորտում:




## ԵՈՔԱ (AEPC) ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 2018Թ. ՆԻՍՏԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը, 2017թ. մայիսի 7-ից անդամակցելով Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիային (ԵՈՔԱ), այս տարի հյուրընկալեց ԵՈՔԱ անդամ յոթ հաստատությունների ներկայացուցիչների Ավստրիայից, Նորվեգիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ռումինիայից, Վրաստանից և Ուկրաինայից:

Նոյեմբերի 7-ին՝ մինչ գործադիր կոմիտեի նիստի մեկնարկը, կրթահամալիրի ղեկավարության ուղեկցությամբ հյուրերն այցելեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, ծաղիկներ խոնարհեցին Եղեռնի հուշահամալիրին և մեկ րոպե լռությամբ հարգեցին անմեղ զոհերի հիշատակը:

Կրթահամալիրում նրանց պաշտոնապես դիմավորեց կրթահամալիրի ղեկավար կազմը՝ ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի գլխավորությամբ: Նրա առաջարկով հյուրերը հարգանքի տուրք մատուցեցին ծառայության ընթացքում և արցախյան գոյամարտի ժամանակ զոհված ոստիկանների հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով նրանց հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Առջևում ԵՈՔԱ գործադիր կոմիտեի նիստն էր, որի մեկնարկն ազդարարեց ԵՈՔԱ նախագահ, Ավստրիայի դաշնային ՆԳՆ անվտանգության ակադեմիայի պետ Նորբերթ Լայթները: Նիստին մասնակցում էին Ավստրիայի դաշնային ՆԳՆ անվտանգության ակադեմիայից ԵՈՔԱ գլխավոր քարտուղար Փիթեր Լամփլոթը և ԵՈՔԱ քարտուղար Մարիո Քրեբսը, Նորվեգիայի ոստիկանության համալսարան-քոլեջից՝ պետ, ԵՈՔԱ փոխնախագահ Նինա Սկարպենեսը և Սյուզաննա Բանսելը, Ուկրաինայի ՆԳՆ Լվովի պետական համալսարանից՝ ռեկտոր Ռոման Բլագուտան և Վասիլ Ֆրանչուկը, Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի ռեկտորի տեղակալ Միրանդա Խաբազին, Գերմանիայի ոստիկանության համալսարանից՝ Գուիդո Քաթթերթը, Ռումինիայի Ալեքսանդրու Յոհանն Քուզայի անվան ոստիկանության ակադեմիայից՝ Սերխիու Ադրիան Վասիլեն և Գաբրիել Վիրգիլ Թաուբերը, Ֆրանսիայի ազգային ոստիկանական քոլեջից՝ Պասկալ Բաստիդեն:

Բացման խոսքում պարոն Լայթները ողջունեց մասնակիցներին և հատուկ շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար:

Ողջունելով ԵՈՔԱ նախագահ Նորբերթ Լայթներին և նիստի մասնակիցներին՝ բացման խոսքով ելույթ ունեցավ նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը. «Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիայի գործադիր խորհրդի այս տարվա հերթական նիստը որոշվեց անցկացնել Հայաստանում, ուստի մեծագույն պատվով և սիրով ողջունում եմ Ձեզ Երևանում: Ի դեպ, ցանկանում եմ նշել, որ դուք մի քաղաքում եք, որի 2800-ամյակը նշվեց օրեր առաջ: Դուք դեռ հնարավորություն կունենաք ծանոթանալու մեր քաղաքին, մշակույթին և, կարծում եմ, ինքներդ կհամոզվեք, որ, չնայած բազմադարյա պատմությանը, Հայաստանը ձգտում է լինել ժամանակակից, զարգացած պետություն՝ պահպանելով իր ավանդույթներն ու ժառանգությունը»: Մ. Բաբայանը նաև հավելեց, որ ՀՀ ոստիկանությունում տեղի ունեցող բարեփոխումների շրջանակներում մշտապես կարևորվել է առաջավոր փորձի ուսումնասիրումը և կիրառումը համապատասխան ոլորտներում. «Անդամակցելով Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիային՝ մենք առավել ամրապնդեցինք և հստակեցրինք մեր անելիքները միջազգային ոստիկանական կրթության բնագավառում: Այժմ մեր և անդամ մյուս երկրների համար երկուստեք ստեղծված է հնարավորություն՝ կրթվելու, վերապատրաստվելու և փոխանակելու մեր և ձեր փորձը ոստիկանության կրթության շրջանակներում»:

Նիստի օրակարգը հագեցած էր քննարկման ենթակա բազմաբնույթ հարցերով: Գործադիր կոմիտեի աշխատանքային երկու օրերի ընթացքում մասնակիցները լսեցին զեկույցներ և առաջարկներ, որոնք վերաբերում էին ԵՈՔԱ-ն նոր անդամներով համալրելուն, մշտական և դիտորդ անդամների համար սահմանվող լիազորություններին, նոր համատեղ կրթական ծրագրերին, կրթական թեմատիկ համաժողովներ կազմակերպելուն, ինչպես նաև կազմակերպչական բնույթի այլ հարցերին:

Նիստի առաջին օրվա ավարտին մասնակիցներից Ուկրաինայի ՆԳՆ Լվովի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոման Բլագուտան առաջարկեց գործադիր կոմիտեի հաջորդ նիստն անցկացնել Լվով քաղաքում, ինչն արժանացավ մասնակիցների հավանությանը:

Նիստի հաջորդ օրը՝ նոյեմբերի 8-ին, մասնակիցները քննարկեցին միջազգային կազմակերպությունների, մի շարք ոստիկանական ուսումնական հաստատությունները միավորող ասոցիացիաների հետ համագործակցելու առաջարկություններ: Նիստի ընթացքում հակիրճ տեղեկատվություն տրամադրվեց ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL), Կենտրոնական Եվրոպայի ոստիկանության ակադեմիայի (CEPA), Ոստիկանական ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (INTERPA) մասին:

Ամփոփելով գործադիր կոմիտեի նիստի արդյունքները՝ ԵՈՔԱ նախագահ Նորբերթ Լայթները դրական գնահատեց կատարված աշխատանքները և շնորհակալություն հայտնեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանին, ինչպես նաև մյուս աշխատակիցներին՝ բարձրակարգ միջոցառում կազմակերպելու համար:

**Անի Ղուկասյան**
**Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ,**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ



Ուսումնական գործընթացի բարելավման և կատարելագործման ուղղությամբ դեռևս սեպտեմբերից իրականացվում են տարբեր միջոցառումներ: Դրանցից առանձնակի ուշադրության են արժանի վերահսկողական դասալսումները, որոնք դարձան կայուն և գործող մեխանիզմ հետագա բարելավումներ իրականացնելու համար: Դասալսումների արդյունքների վերլուծությունների հիման վրա ակադեմիայում մասնագիտական պարապմունքների պարբերական անցկացման հիմք դրվեց, որը ոչ միայն փորձի փոխանակման, այլև դասավանդման մեթոդիկայի առումով կարևորագույն խթան կարող է լինել երիտասարդ դասախոսների մասնագիտական հմտությունների կատարելագործման համար:

Այս հանգամանքներով պայմանավորված՝ հոկտեմբերի 23-ից կրթահամալիրում տեղի են ունենում պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ դասավանդման հմտությունների կատարելագործմանն ուղղված մասնագիտական պարապմունքներ: Առաջին պարապմունքի ընթացքում ներկայացվեց «Իրավաբանական դասընթացի (մոդուլի) դասավանդման ընդհանուր մեթոդիկա» թեման, որին ներկա էին կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության անձնակազմը, ուսումնական հաստատությունների ղեկավար կազմը: Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, որն ընգծեց պարապմունքի անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ միաժամանակ տեղեկացնելով, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի նախաձեռնած նման պարապմունքները կրելու են շարունակական բնույթ, որոնք միտված են առաջավոր փորձի փոխանցմանը: Մասնագիտական պարապմունքի առաջին թեման շնորհանդեսով ներկայացրեց ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. Ա. Մելիքսեթյանը, որն ընդգծեց ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար մեթոդներ մշակելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ինչպես բուհի, այնպես էլ լսարանի առանձնահատկությունները: Բանախոսի ելույթից հետո տեղի ունեցավ քննարկում:

Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասավանդման հմտությունների կատարելագործմանն ուղղված մասնագիտական հաջորդ պարապմունքն անցկացվեց հոկտեմբերի 31-ին՝ «Դասախոսի մասնագիտական բնութագրիչները» թեմայով, որը ներկայացրեց ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը: Բանախոսը թեմայի շրջանակում ներկայացրեց մանկավարժական և գիտահետազոտական գործունեության էությունը, դասախոսի հեղինակության հիմնական ցուցիչները, արհեստավարժ և ոչ արհեստավարժ դասախոսի բնութագրիչները, դասախոսի դրական և բացասական անձնային հատկանիշները, ինչպես նաև ակադեմիայի 3-րդ և 4-րդ կուրսերի սովորողների շրջանում իրականացված «Դասախոսը սովորողների աչքերով» վերտառությամբ հարցման արդյունքները: Նմանատիպ մասնագիտական պարապմունքներն իրականացվելու են ամբողջ ուսումնական տարվա ընթացքում և նպաստելու են դասախոսական անձնակազմի մանկավարժական հմտությունների և կարողությունների կատարելագործմանը:

**Անի Ղուկասյան**
**Միջազգային համագործակցության և**
**ՏՏ ներդրման բաժնի տեսուչ,**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# ՀԵՐԹԱԿԱՆ ՔԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ




Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հմտությունների կատարելագործման և գիտամանկավարժական գործունեության զարգացման համար կարևոր նախապայմաններից են ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան տարբեր կազմակերպությունների կամ հաստատությունների կազմակերպած թեմատիկ ծրագրերին ու համապատասխան դասընթացներին մասնակցությունը և պարբերաբար վերապատրաստվելը: Այս առումով կարևոր էր հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 2-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի իրավապահ մարմինների միջազգային ակադեմիայում (ILEA) ԱՄՆ պետքարտուղարության ֆինանսավորմամբ անցկացված «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը» թեմայով վերապատրաստումը, որին մասնակցում էին Հունգարիայի, Ալբանիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի և Հայաստանի իրավապահ մարմինների ներկայացուցիչները:

Հայաստանից ՀՀ քննչական կոմիտեի երեք ներկայացուցների հետ ընդգրկված էր նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը: Վերջինիս ներկայությունը կարևորվում էր այնքանով, որ Մ. Մարկոսյանի ձեռք բերած փորձը և համապատասխան տեղեկատվությունը կօգտագործվի կրթահամալիրի ուսումնական գործընթացի տարբեր մակարդակներում:

Միջազգային համագործակցության ամրապնդման ուղղությամբ կարևոր քայլ էր վերապատրաստման բոլոր մասնակիցների գրանցումը և անվանական էջերի բացումն Իրավապահ մարմինների միջազգային ակադեմիայի https:/ilea.state.gov միասնական էլեկտրոնային հարթակում, ինչը նրանց հնարավորություն կտա օգտվելու հարթակի հարուստ տեղեկատվական ռեսուրսներից և անհրաժեշտության դեպքում կապ հաստատելու միմյանց հետ:

Վերապատրաստման բոլոր մասնակիցներն ստացան հավաստագրեր՝ դասընթացը բարեհաջող ավարտելու վերաբերյալ:

**Անի Ղուկասյան**
**Միջազգային**
**համագործակցության և**
**ՏՏ ներդրման բաժնի տեսուչ,**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՂԻ ԵՆ ԸՆՏՐԵԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կարևորվում են ոչ միայն բուն դասաժամերը, այլև արտալսարանային խմբակները և դրանց շրջանակներում կազմակերպվող հետաքրքրաշարժ մասնագիտական միջոցառումները:

2018թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ու քրեական դատավարության ամբիոններին կից գիտական խմբակների 2018-2019 ուստարվա առաջին համատեղ նիստը տարբերվում էր այլ գիտական խմբակների հանդիպումներից: Այս անգամ սովորողներին ու դասախոսներին միավորել էր վիկտորինայի ձևաչափով ինտելեկտուալ խաղը:

Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 35 սովորող մասնակցեց վիկտորինային, որի հարցերը քրեական իրավունքի և քրեական դատավարության բնագավառներից էին:

Մասնագիտական հարուստ գիտելիքների շնորհիվ վիկտորինայի հաղթող ճանաչվեցին 4-րդ կուրսի սովորող Մաքսիմ Սինդոյանը, 3-րդ կուրսի սովորողներ Վաչագան Սուքիասյանը և Անահիտ Հակոբյանը, 2-րդ կուրսի սովորողներ Թագուհի Ավդալյանը և Անուշ Աղաջանյանը:

Մրցույթի ավարտին հաղթողները պարգևատրվեցին մասնագիտական գրականությամբ, որը, անշուշտ, կհարստացնի արդեն իսկ առկա գիտելիքները:

Կարևոր հանդիպում և մասնագիտական քննարկում ծավալվեց քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնին կից գիտական խմբակի՝ նոյեմբերի 5-ի հերթական նիստում: Հարկ է ընդգծել, որ նշված ամբիոնը և ամբիոնին կից խմբակի գործունեության մակարդակը վերջին շրջանում զգալիորեն բարձրացել է, և կազմակերպվող միջոցառումներում գրանցվում են կա՛մ բարձր ցուցանիշներ, կա՛մ հրավիրված լավագույն մասնագետների հետ ծավալվում է հետաքրքիր և մասնագիտորեն արդյունավետ քննարկում: Այս անգամ քննարկվող խնդիրը կրում էր «Անչափահասների արդարադատության հիմնախնդիրները» խորագիրը: Այն կազմակերպվել էր քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնին կից՝ հանցագործության և պատժի հիմնահարցերի հետազոտության գիտական խմբակի 2018-2019 ուստարվա 2-րդ նիստի ընթացքում:

Նիստին ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ.Եսայանը, կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գևորգյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը, քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի և գիտական աշխատանքների բաժնի անձնակազմը:

Գիտական խմբակի նիստին հրավիրվել էր ՀՀ արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի փոխտնօրեն, անչափահասների արդարադատության խորհրդի քարտուղար Գայանե Հովակիմյանը, որը ելույթ ունեցավ «Անչափահասների արդարադատության արդի հայեցակարգերը» թեմայով: Գ. Հովակիմյանը ներկայացրեց Հայաստանում անչափահասների արդարադատության ոլորտի խնդիրները, ուղղությունները, անչափահասների արդարադատության խորհրդի կողմից կատարվող հիմնական աշխատանքները: Քննարկվեցին անչափահասների արդարադատության ոլորտում ոստիկանության խնդիրները, համագործակցության ուղղությունները: Ուսանողների և բանախոսի միջև հարց ու պատասխան եղավ:

Նիստի ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը Գ. Հովակիմյանին շնորհակալագիր հանձնեց կրթահամալիրի հետ համագործակցության հաստատման և ամրապնդման գործում ունեցած ավանդի համար:

**Անի Ղուկասյան**
**Միջազգային համագործակցության և**
**ՏՏ ներդրման բաժնի տեսուչ,**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՈՒՍԱՆՈ՛Ղ

Ուսանողությունը յուրաքանչյուր պետության զարգացման ու առաջընթացի կարևորագույն երաշխիքն է: Հասարակության երիտասարդ մտավոր ներուժը, ի դեմս ուսանողների, այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցությունը: Հմուտ և մասնագիտական գիտելիքներով հարուստ երիտասարդներով է պայմանավորված գիտական մտքի զարգացումն ու ողջ հասարակության առաջընթացը: Մենք թևակոխել ենք մի նոր դարաշրջան, երբ օր օրի փոփոխվող համաշխարհային մարտահրավերներին կարող ենք դիմակայել միայն արդիական գիտելիքներով:

Ու թեև ուսանողության տոնը զուգորդվում է երիտասարդության, ռոմանտիկայի ու զվարճանքների հետ, այնուհանդերձ, այդ գեղեցիկ օրվա նախապատմությունն անչափ տխուր է ու ողբերգական:

Նոյեմբերի 17-ին ամբողջ աշխարհը նշում է ուսանողների միջազգային օրը, սակայն շատ քչերը գիտեն, թե որտեղից և ինչպես է սկիզբ առել ուսանողների համերաշխության օրը: 1938-1939թթ. Գերմանիայի առաջնորդ Ադոլֆ Հիտլերն անարգել բռնազավթեց Չեխոսլովակիայի որոշ տարածքներ, այնուհետև՝ ամբողջ երկիրը: Ի տարբերություն Լեհաստանի՝ այդ երկրի շրջափակումը տեղի ունեցավ առանց գեթ մեկ կրակոցի: Հետագայում չեխերը լրջագույն ընդվզումներ կազմակերպեցին ընդդեմ նացիստական զավթիչների: Հատկապես հիշարժան են 1939թ. աշնանը տեղի ունեցած դեպքերը: Հոկտեմբերին բնակչությունը դուրս է գալիս փողոց, և Պրահայում սկսվում են հակահիտլերյան խմբավորման դեմ ուղղված զանգվածային ցույցերը: Դեռևս նույն ամսվա սկզբից կազմակերպիչները քաղաքով մեկ թռուցիկներ էին բաժանում՝ մարդկանց կոչ անելով փողոց դուրս գալ: Ուսանողներն ու դասախոսները նույնպես որոշեցին մասնակցել ցույցերին:

Գլխավոր ցույցն սկսվում է հոկտեմբերի 28-ին Վացլավյան հրապարակում, սակայն մի քանի քաղաքում բնակչությունը խաղաղ ցույցեր էր անցկացնում: Մասնակիցները տարածում էին հականացիստական կոչեր, երգում պետական օրհներգն ու ազգային հայրենասիրական երգեր: Իրականում այդ օրը երկրի անկախության օրն էր:

Ցույցն անակնկալի է բերում Ա. Հիտլերին, քանի որ վերջինս չէր սպասում, որ Լեհաստանի դեմ տարած հաղթանակից հետո չեխերի բողոքի ցույցերը նման մասշտաբների կհասնեն: Զայրացած Ֆյուրերը հրամայում է ցրել ցույցը: Արդյունքում գերմանական զորքերն անցնում են կտրուկ գործողությունների: Զորքի արձակած կրակոցների հետևանքով վիրավորվում է Կառլովի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող Յան Օպլետալը, որը ցույցի ակտիվիստներից էր: Վիրավորին տեղափոխում են հիվանդանոց և անմիջապես վիրահատում: Վիրահատությունը հաջող է անցնում, սակայն իմանալով, որ իր առողջությամբ մշտապես հետաքրքրվում է գեստապոն, Յանը հրաժարվում է ջուր և սնունդ ընդունելուց՝ մտածելով, որ կարող են իրեն թունավորել: Նրա վիճակը գնալով վատանում է, իսկ նոյեմբերի 11-ին մահանում է՝ այդպես էլ չվայելելով բժշկական գիտությունների դոկտորի կոչումը, որը նրան շնորհվում է հետմահու:

Յան Օպլետալին թաղում են նոյեմբերի 15-ին: Իմանալով, որ գերմանացիները որոշել են դին ուղարկել հանգուցյալի հայրենի գյուղ, ուսանողական կազմակերպությունները պահանջում են, որ թաղման թափորը շրջի քաղաքում: Սկզբում գերմանացիները դեմ էին, սակայն վերջիվերջո համաձայնում են: Թափորն առավոտյան շարժվում է հանրակացարանից, որտեղ ապրում էր Յանը: Խոստացված կարգուկանոնը պահպանվում է միայն սկզբում, քանի որ մեկնարկից որոշ ժամանակ անց թափորի 4000 մասնակից սկսում է երգել Չեխոսլովակիայի պետական օրհներգը, ինչի արդյունքում ֆաշիստական խմբավորման զորքերն անցնում են ագրեսիվ գործողությունների: Յանին հրաժեշտ տալուց հետո ամբոխը չի ցրվում, այլ շարժվում է դեպի Կարլովյան հրապարակ՝ ճանապարհին ավելի ու ավելի ստվարանալով:

Այսպիսով՝ 1939 թվականի նոյեմբերի 17-ին սկսվում է չեխ ուսանողության դեմ գործողությունը, որի արդյունքում գեստապոն շրջափակում է Պրահայում, Բռնոյում և մի քանի այլ քաղաքներում գտնվող ուսանողական հանրակացարանները: Մոտ 2000 ուսանող տեղափոխվում է Ռուզինե օդանավակայանի շրջան, որտեղ օտարերկրացի և 20 տարին չլրացած ուսանողներն ազատ են արձակվում, իսկ մնացածը՝ 1267 ուսանող, ուղարկվում է Զակսենհաուզենի համակենտրոնացման ճամբար:

Նոյեմբերի 17-ի երեկոյան Ռուզինեի բանտում գերմանացիներն առանց դատավարության մահապատժի են ենթարկում ուսանողական շարժման 9 ակտիվիստի, իսկ հաջորդ օրը գնդակահարում են ևս 3 ուսանողի:

Հիտլերի հրամանով 10 համալսարան և ինստիտուտ է փակվում, այդ թվում նաև Կառլովի հայտնի համալսարանը և Պրահայի գեղարվեստի ակադեմիան: 1300 դասախոս զրկվում է աշխատանքից, իսկ շուրջ 2000 ուսանող՝ կրթություն ստանալու հնարավորությունից:

1941 թվականին նացիզմի դեմ կռվող 50 երկրի պատվիրակություններից կազմված Ուսանողների համաշխարհային կոնգրեսը նոյեմբերի 17-ը հայտարարեց Ուսանողների միջազգային օր՝ ի հիշատակ Պրահայի ողբերգական իրադարձությունների և սպանված չեխ ուսանողների: Հետագայում այդ օրը հաստատվեց 1946թ. Պրահայում տեղի ունեցած ժողովի ժամանակ:

Յան Օպլետալը ևս չմոռացվեց: Պատերազմից անմիջապես հետո Պրահայի կենտրոնական փողոցներից մեկը հենց նրա անունով կոչվեց: Հուշատախտակ տեղադրվեց ինչպես այն հանրակացարանում, որտեղ ապրում էր Յանը, այնպես էլ այն պատի մոտ, որտեղ նա վիրավորվել էր: Ավելին՝ 1996 թվականին Յան Օպլետալը հետմահու պարգևատրվեց Տոմաշ Մասարիկի շքանշանով:

Ուսանողների միջազգային օրվա հռչակումը և հերոսական այս պատմությունը վկայում են, թե որքան մեծ ու կարևոր դեր ունի ուսանող երիտասարդությունը զարգացած հասարակության կերտման գործում:

Տարբեր երկրներում արդեն ձևավորվել են տոնը նշելու ավանդույթներ: Օրինակ՝ ԱՄՆ-ում ուսանողներն այդ օրը ձգտում են զվարճանալ հնարավորինս թանկ ակումբներում և վայելել ամենաթանկ խմիչքներն ու ուտեստները: Դանիայի գիմնազիայի շրջանավարտներն ունեն հետաքրքիր մի ավանդույթ. նրանք ամբողջ գիշեր բեռնատար հիշեցնող մեքենաներով շրջում են քաղաքի փողոցներով, կիթառ նվագում, երգում և գարեջուր խմում:

Հայաստանն ուսանողության օրվանն առնչվող հատուկ ավանդույթներ չունի: Ուսանողների մի մասը գուցե չգիտի էլ այս տոնի մասին, սակայն գնալով այդ օրվա խորհուրդն իմաստավորվում է գեղեցիկ ու բովանդակալից տոնակատարություններով:

Մաղթե՛նք մեր ուսանողությանը բեղմնավոր ուսումնական տարիներ, իրենց երկրի լիիրավ տերը լինելու գիտակցություն և, իհարկե, կյանքում իրենց տեղը գտնելու անկոտրում ցանկություն:

Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ ուսանող:

**Լիլիթ Ոսկանյան**
**Կրթության որակի ապահովման բաժանմունքի առաջատար մասնագետ**

# ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՐԱԿԱՅԻՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ




2018թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մարզադահլիճում քոլեջի մարտական, ֆիզիկական և ՀՏՊ ամբիոնի կողմից կրակային և ֆիզիկական պատրաստականության առարկաների շրջանակներում կազմակերպվել էր հատուկ դասընթաց «ՀՀ ոստիկանությունում կիրառվող զենք-զինամթերքը, զենքով աշխատելու մարտավարությունը» թեմայով: Դասախոսությունը կազմակերպվել էր կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի երրորդ և չորրորդ կուրսի, ինչպես նաև վերապատրաստման ֆակուլտետի եռամսյա խմբերի սովորողների համար:

Կրակային պատրաստականություն առարկայից դասը վարում էին ՀՀ ոստիկանության չորրորդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հայկ Ալբերտի Մուրադյանը և նույն վարչության երկրորդ բաժնի պետ, ոստիկանության մայոր Արմեն Խաչատուրի Կարապետյանը, իսկ ֆիզիկական պատրաստականություն առարկայից «Ձեռնամարտի հնարքների մարտավարությունը» թեմայով դասախոսում էր ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ չորրորդ վարչության երրորդ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Գուրգեն Վոլոդյայի Գյունաշյանը:

Այսուհետ նմանօրինակ դասընթացները կրելու են շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով խթանելու ոստիկանության փորձառու աշխատակիցների գործնական հմտությունների, փորձի փոխանցումն ապագա սպաներին և վերապատրաստվող անձնակազմին:

**Ա. Գրիգորյան**
**Մարտական, ֆիզիկական և հատուկ տակտիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ**

# ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՑ

Անկախ պետականության վերակերտման հայ ժողովրդի դարավոր իղձն իրականություն դարձավ 1918թ. մայիսին: Հանրապետության գործադիր իշխանության 80 տոկոսի գործառույթներն իրականացնում էր ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Այդ համակարգում իրենց առանցքային տեղն ունեին հայոց միլիցիան և կոմիսարիատը: Հանրապետության ղեկավարությունը գիտակցում էր, որ մեծ լիազորություններով օժտված միլիցիան պետք է կրթված լինի: Այդ իսկ պատճառով 1919թ. հուլիսի 9-ին ՀՀ արդարադատության նախարարությունը հաստատեց «Դատաոստիկանական դասընթացների» կանոնադրությունը: Դասընթացն ավարտածներին շնորհվելու էր «առաջին կարգի միլիցիայականի» կոչում: Սակայն դասընթացները բավարար չէին. երկրի ներքին անվտանգության ապահովումը հրամայաբար պահանջում էր ոստիկանական գործի որակյալ կադրեր: Այդ նպատակով 1919թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի հրամանով ստեղծվում է միլիցիայի դպրոց: Ուսման տևողությունը նախատեսվում էր 3-5 ամիս:

Խորհրդային իշխանությունը մեծ տեղ էր հատկացնում երկրում անգրագիտության վերացմանը: Այս հիմնախնդիրը չի շրջանցում նաև միլիցիային: Դա էր պատճառը, որ ՆԳԺԿ-ն և Միլիցիայի գլխավոր վարչությունն աշխատակիցների առջև խնդիր էին դրել կարճ ժամանակում ոչ միայն վերացնել անգրագիտությունը, այլև իրավապահ մարմինն ապահովել որակյալ և կրթված կադրերով: Կազմակերպվում են միլիցիայի աշխատակիցների պատրաստման վեցամսյա կուրսեր, որտեղ սովորում է 40 հոգի:

Դպրոցը 1922թ. նոյեմբերի 12-ին տալիս է իր առաջին շրջանավարտները: Այդ օրը սահմանվում է հայկական Միլիցիայի օր:

1931թ. սեպտեմբերի 1-ից սկսում է գործել ՀԽՍՀ Երևանի միլիցիայի դպրոցը: Մինչև 1935թ. դպրոցը ՀԽՍՀ միլիցիայի վարչության ենթակայության տակ էր, որի պետ էր նշանակվել միլիցիայի ավագ լեյտենանտ Բարդուղ Պետրոսյանը:

1935թ. Անդրկովկասի միլիցիայի դպրոցները միավորվում են, և հիմնվում է «Անդրկովկասյան միացյալ դպրոցը (Միջերկրամասային թբիլիսյան ՆԳԺԿ-ի դպրոց)» կամ թբիլիսյան N 2 դպրոցը, որը տեղակայված էր հայկական Հավլաբար թաղամասում: 1936թ. ԽՍՀՄ նոր սահմանադրությունն ընդունելուց հետո՝ 1937թ. սեպտեմբերի 1-ին, կրկին վերաբացվեց ԽՍՀՄ ՆԳԺԿ միլիցիայի գլխավոր վարչության երևանյան միջգավառական ղեկավար կազմի դպրոցը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին դպրոցը շարունակեց իր գործունեությունը՝ չնայած այն հանգամանքին, որ ղեկավար և դասախոսական կազմի զգալի մասը մեկնեց ռազմաճակատ: 1943թ. նոյեմբերին դպրոցի պետ նշանակվեց Աբգար Բոզինյանը: Ունկնդիրների թիվը 30 էր, նրանցից 7-ն աղջիկ էին:

1951թ. դպրոցը վերանվանվեց Պետական անվտանգության մինիստրության միլիցիայի երևանյան դպրոց, որը գործեց մինչև 1955թ. հունվարի 29-ը: 1956թ. օգոստոսի 14-ին միութենական ղեկավարությունը որոշում է ընդունում միութենական հանրապետություններում հիմնել միլիցիայի կադրերի պատրաստման դպրոցներ:

Տես՝ էջ 5

# ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆ



2018թ. նոյեմբերի 20-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի առաջին դասակում անցկացվեց «Happy Thanksgiving» խորագրով անգլերենի բաց դաս:

Կրթահամալիրում ավանդույթ է դարձել անգլախոս երկրների մշակույթին պարբերաբար ծանոթանալը, և այս միջոցառումը տեղեկացված լինելու ևս մեկ առիթ էր: Դասի ընթացքում սովորողները ներկայացրին, որ այս տոնի ավանդույթն ունի հարյուրամյակների պատմություն, և ԱՄՆ-ում այն նշվում է նոյեմբերի չորրորդ հինգշաբթին (այս տարի նոյեմբերի 22-ին):

1620թ. անգլիացի նորաբնակների մի խումբ «Mayflower» (մայիսյան ծաղիկ) նավով հասել է Մասաչուսեթս նահանգ և հիմնել Փիլմության գաղութը: Տեղաբնակ հնդկացիներն օգնել են նրանց հող մշակել, ձուկ որսալ և խուսափել թունավոր բույսերից: 1621թ. առաջին բերքը հավաքելուց հետո նորաբնակների նահանգապետ Ուիլիամ Բրեդֆորդը գոհաբանության տոն է կազմակերպում և հրավիրում օգնության ձեռք մեկնած հնդկացիներին: Նրանք իրենց շնորհակալությունն են հղում առ Աստված՝ ցրտաշունչ ձմռանը դիմակայելու և առատ բերք ստանալու համար:

Միջոցառման ժամանակ սովորողները դիտեցին տեսաֆիլմեր, պատասխանեցին ֆիլմերին վերաբերող առաջադրված հարցերին, կատարեցին թեստային աշխատանքներ և այլ հետաքրքիր տեղեկություններ հայտնեցին գոհաբանության տոնի վերաբերյալ: Նրանք նշեցին նաև, որ սովորաբար հենց գոհաբանության տոնի ժամանակ է կազմակերպվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաքը:

Դասի ժամանակ սովորողները գունավոր դրոշների վրա գրեցին, թե իրենք ինչի համար և ում են շնորհակալ և ամրացրին օրվա խորհրդանիշ դդումի վրա:

Այս դասը յուրօրինակ էր նաև նրանով, որ դասախոսի դերում սովորողն էր: Ամբողջ դասը վարում էր նույն դասակի սովորող Հասմիկ Մարտիրոսյանը, որն իրեն շատ լավ դրսևորեց դասախոսի կարգավիճակում:

Դասի ավարտին Ժաննա Ֆարամազյանը սովորողների անունից շնորհակալություն հայտնեց անգլերենի դասախոս Անի Հայրապետյանին՝ դասերը հետաքրքիր անցկացնելու, իրենց աշխարհայացքը զարգացնելու և մոտիվացնելու համար: Այս բաց դասին ներկա էր նաև ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Նվարդ Վարյանը: Դասի ավարտին նա նշեց, որ որևէ օտար լեզու սովորելիս շատ կարևոր է լեզվակիրների մշակույթին ծանոթանալը, և այս առումով ողջունելի է նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

Կարևորելով անգլերենի իմացությունը ոստիկանի աշխատանքային գործունեության մեջ՝ նա հորդորեց սովորողներին անընդհատ կատարելագործել իրենց անգլերենը:

**Ա. Հայրապետյան**
**Լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ**

# ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ




Գորովը հայրենիքի հանդեպ պետք է լինի անսահման. բոլորս պետք է սիրենք մեր հայրենիքն այն պարզ պատճառով, որ մերն է, մեզ է ավանդվել մեր պապերի սրբագործված արյամբ: Հայրենիքը կարող ենք զորեղացնել անառիկ սահմաններով, օրենքի անխախտ կատարմամբ և գիտության զորավոր ուժով: Ոստիկանության մեկդարյա փորձառությունների ծանրության գնով վաստակած ուղով առաջ պետք է ընթանա գալիք սերունդը: Մենք՝ որպես օրենքի և օրինականության կրողներ, մեր հանապազօրյա աշխատանքով պետք է օրինակ ծառայենք ապագա սերնդին՝ հանուն գալիք զարթոնքի: Գիտելիքների, փորձի փոխանցման, իրավակարգի ամրապնդման և օրինականության սերմանման նպատակով ս.թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հյուրընկալել էր Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 դպրոցի 8-րդ դասարանի սաներին՝ դասվար Ս.Սարգսյանի և զինղեկ Մ. Հովսեփյանի գլխավորությամբ: Ճանաչողական-ուսուցողական այցի ընթացքում դպրոցականներին ուղեկցեցին և կրթահամալիրի առօրյային ծանոթացրին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՈԶ հրամանատարական ֆակուլտետի կրտսեր տեսուչ, ոստիկանության սերժանտ Ասատուր Ասլանյանը և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ Լիանա Խրշոյանը:

Դպրոցականների ճանաչողական-ուսուցողական այցի սկիզբն ազդարարվեց «Մեզ բացակա չդնեք» հուշակոթողով, որի վրա ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված և անմահացած ոստիկանների անուններն են փիմագրված: Իրենց հղձերն ու երազանքներն իրագործվելու համար կրթահամալիրի Սուրբ Վարդան մատուռում մոմեր վառեցին և տերունական աղոթք ուղղեցին առ Աստված: Դպրոցականների ոգևորությունը հատկապես թեժացավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հրաձգարանում, որտեղ ևս մեկ անգամ ծանոթացան ատրճանակի գործածության կանոններին:

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանում ծանոթացան ոստիկանության անցած ուղուն՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը: Նրանց աչքերում կարելի էր տեսնել զարմանք, հիացմունք և ընդօրինակելու ձգտում: Հուսով ենք՝ ազգին և հայրենիքին ծառայելու պատգամը դպրոցականների գիտակցության մեջ կգամվի: Թանգարանին հաջորդեց կրթահամալիրի ակումբ այցելությունը: Մուտքին չհասած՝ նրանց առջև բացվեց բիբլիական Արարատի տեսարանը՝ ականավոր նկարիչ Հովհաննես Այվազովսկու «Նոյն իջնում է Արարատից» հայտնի կտավից: Ակումբում նրանք տեսան բոլոր ոստիկանապետերի դիմանկարները: Աշակերտների աչքից չվրիպեց կարևոր մի նշանաբան՝ «Անխախտ է հավատարմությունը՝ մեկ անգամ և մեկընդմիշտ տրված երդմանը», որը յուրաքանչյուրիս կենսակերպն է:

Ֆիզիկական պատրաստականության համար նախատեսված մարզասարքերով հագեցած դահլիճում նրանք փորձեցին իրենց ֆիզիկական ուժերն ու կարողությունները, ինչը մեկ անգամ ևս ոգևորության ալիք բարձրացրեց: Կրթահամալիրի աշնանային չքնաղ գույներով հագեցած պուրակում նրանց «դիմավորեցին» քարից շունչ առած մեծանուն գրողների՝ Պ.Սևակի, Ա.Հեքիմյանի, Ե.Չարենցի արձանները: Մատաղ սերնդին ներկայացրին նրանց մեծ ավանդը և անուրանալի գրական ժառանգությունը: Հյուրընկալությունն ավարտվեց կրթահամալիրի սովորողների կողմից շարային հանդիսավոր երթով և պատանի հյուրերի համար նախատեսված անակնկալ նվերներով:

Կրթահամալիրից ստացված հրաշալի տպավորությունները, ջերմ մթնոլորտը, բովանդակալից զրույցներն ու ձեռք բերված գիտելիքները դեռ երկար կմնան դպրոցականների հիշողություններում: Նրանց այցով կամրջվեց ոստիկանություն-դպրոց ևս մեկ համագործակցություն: Ուստի հույս ենք հայտնում հետագայում նրանցից շատերին տեսնելու մեր շարքերում՝ ոստիկանական մեծ ընտանիքում:

**Լիանա Խրշոյան**
**Ծառայության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ**

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՉՔԵՐՈՎ

«Կրթության որակի ապահովման գործընթացը փորձագետի աչքերով» թեմայով հարցազրույց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանի հետ



**-Բարև Ձեզ, պարոն Մարկոսյան: Բացի մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքով զբաղվելուց Դուք նաև որպես փորձագետ հանդես եք եկել բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում: Ե՞րբ եք ընտրվել որպես փորձագետ, և ի՞նչ չափանիշներ են պետք կրթության ոլորտում փորձագետ դառնալու համար:**

- Բարև Ձեզ, շնորհակալ եմ հարցազրույցի առաջարկի համար: Ամեն ինչ սկսվեց 2017 թվականի հունվարին, երբ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում մասնակցեցի 24 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստմանը, որը նվիրված էր մասնագիտական կրթական ծրագրերի՝ ակնկալվող ելքային արդյունքներին և ուսանողների գնահատմանը: Վերապատրաստման արդյունքներով դարձա որակի ապահովման աջակից և ստացա համապատասխան հավաստագիր: Այնուհետև Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնից տեղեկացա, որ կարող եմ գրանցվել փորձագետների նախնական բազայում, լրացնել փորձագետի վերաբերյալ տվյալների հարցաշարը և ընտրվել փորձագետ: Այդպես էլ եղավ, ու ևս մեկ վերապատրաստման մասնակցելուց հետո՝ 2017 թվականի մայիսին, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ կնքված պայմանագրի հիման վրա որպես փորձագետ մասնակցեցի բուհերից մեկի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին: Ինչ վերաբերում է փորձագետին ներկայացվող պահանջներին, ապա դասախոսական կազմի ներկայացուցիչը փորձագետ դառնալու համար պետք է անցած լինի համապատասխան վերապատրաստում, ունենա տվյալ մասնագիտական ոլորտում դասավանդման և գիտահետազոտական գործունեության փորձ: Կարծում եմ՝ շատ լավ կլինի, եթե նաև առկա լինի կրթության կառավարման, ինչպես նաև կրթական ծրագրերի մշակման և գնահատման փորձ:

**- Ձեր կարծիքով՝ ի՞նչ կտա փորձագետի խորհրդատվությունը բուհին:**

- Կարծում եմ՝ շատ ճիշտ և կարևոր շեշտադրում եք անում, երբ բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման ամբողջ գործընթացում առանձնացնում եք հենց փորձագետների խորհրդատվությունների գործոնը: Բանն այն է, որ հենց փորձագետների խորհրդատվություններն են հավատարմագրման գործընթացի այն կարևոր տարրը, որից բուհը ամենամեծ օգուտն է քաղում: Փորձագետների խորհրդատվություններն են, որ բուհի համար բարելավման ծրագիրը կազմելու հիմք են դառնում և թույլ են տալիս առավելագույնս ապահովել բուհում տեղի ունեցող գործընթացների համապատասխանությունը օրենսդրությամբ ներկայացվող այն չափանիշներին և չափորոշիչներին, որոնք վերաբերում են մասնագիտական կրթության որակին:

**- Ի՞նչ տվեց Ձեզ փորձագիտական աշխատանքը:**

- Այս հարցը, կարծում եմ, նախորդ հարցադրման տրամաբանական շարունակությունն է: Պետք է անկեղծ լինեմ և ասեմ, որ նախքան Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում վերապատրաստում անցնելն ու փորձագետ դառնալը բուհի հավատարմագրումը ես պատկերացնում էի որպես ինչ-որ ստուգման գործընթաց, իսկ փորձագիտական խմբին ընկալում էի առավելապես որպես ստուգողների, ովքեր բուհ են եկել ինչ-որ թերություններ գտնելու և արձանագրելու համար: Սակայն փորձագետի կարգավիճակով հավատարմագրմանը մասնակցելուց և այդ ամենն այլ տեսանկյունից դիտարկելուց հետո հասկանում ես, որ փորձագիտական խմբի առաքելությունն ամենևին ստուգելն ու թերություններ գտնելը չէ, այլ փորձագիտական ուսումնասիրությունների հիման վրա բուհին խորհրդատվությունների տրամադրումը՝ կրթության որակը բարձրացնելու նպատակով:

**- Ի՞նչ դեր ունի փորձագիտական խմբում աշխատող ուսանող փորձագետը, և որքա՞ն է դա անհրաժեշտ:**

- Հավատարմագրման գործընթացում ուսանող-փորձագետի դերը շատ կարևոր է: Նախ պետք է ասեմ, որ գործառույթների առումով ուսանող-փորձագետը չի տարբերվում փորձագիտական խմբում ընդգրկված մյուս փորձագետներից: Ուսանող-փորձագետ դառնալու համար ևս անհրաժեշտ է մասնակցել հավատարմագրման վերաբերյալ վերապատրաստումներին: Որպես կանոն, փորձագիտական խմբում ընդգրկվող ուսանողը լինում է մագիստրատուրայի կամ բակալավրիատի բարձր կուրսի սովորող, կարևոր է նաև նրա հասարակական ակտիվությունը բուհում, օրինակ՝ ուսանողական խորհրդի անդամ լինելը: Հավատարմագրման գործընթացում ուսանող-փորձագետի մասնակցությունը խիստ անհրաժեշտ եմ համարում, քանի որ նա այդ ամբողջ գործընթացը դիտարկում և գնահատում է ուսանողի աչքերով: Լավ հիշում եմ՝ երբ մեր փորձագիտական խումբը բուհի հավատարմագրման ժամանակ հանդիպումներ էր ունենում շահակիցների հետ, ուսանողների հետ հանդիպման ընթացքում մեր խմբի ուսանող-փորձագետն ավելի ակտիվ էր, քան մենք, և նա ավելի հեշտ էր շփվում սովորողների հետ ու նրանցից օգտակար տեղեկատվություն ստանում:

**- Փորձագետների ո՞ր կարողություններն են Ձեզ համար առաջնային:**

- Ես կառանձնացնեի հաղորդակցվելու, ֆոկուս խմբային քննարկումներ վարելու կարողությունը, վերլուծական հմտությունները, փաստերն անկողմնակալ գնահատելու կարողությունը, ինչպես նաև թիմային աշխատանքի ունակությունը:

**- Խորքային առումով ինչպիսի՞ աշխատանքներ կիրականացնեիք բուհերում կրթության որակը բարձրացնելու նպատակով:**

- Շատ բազմաշերտ և բարդ հարց է: Եթե առանձնացնելու լինեմ այս ոլորտում առաջնային, հիմնական խնդիրը, ապա կնշեմ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կրթություն տալու կարևորությունը: Ցավոք, այսօր մենք շատ ենք ականատես լինում իրավիճակների, երբ ուսանողը բուհը ավարտելուց հետո չի կարողանում իր մասնագիտությամբ աշխատանք գտնել: Իհարկե, ես հասկանում եմ, որ դրա պատճառները բազմաթիվ են, և խնդիրը միայն կրթության բովանդակության մեջ չէ: Բայց նաև համոզված եմ, որ եթե բուհերը մասնագիտական կրթական ծրագրերը մշակելիս, իրենց շրջանավարտի գիտելիքների, հմտությունների և կարողությունների տեսլականը կազմելիս որպես առաջնային չափանիշ հաշվի առնեն տվյալ ժամանակահատվածում աշխատաշուկայի պահանջները, ապա իրավիճակը էապես կբարելավվի: Նման դեպքում ոչ թե շրջանավարտն ստիպված կլինի թակել գործատուների դռներն իր մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար, այլ գործատուները կսկսեն մրցակցել միմյանց հետ լավագույն շրջանավարտներին «գողանալու» համար:

**- Շնորհակալություն հարցազրույցի համար:**

- Ես եմ շնորհակալ:

**Արուսյակ Գևորգյան**
**Կրթության որակի ապահովման բաժանմունքի առաջատար մասնագետ**

# ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՑ

**Սկիզբը՝ էջ 3**

Նույն թվականի սեպտեմբերի 17-ին Երևանում հիմնվում է հանրապետական ուսումնական կետ՝ ՀԽՍՀ ՆԳ միլիցիայի կրտսեր և միջին հրամանատարական կազմի պատրաստման կենտրոն, որը հետագայում կոչվեց ՀԽՍՀ ՆԳ նախարարության ուսումնական կենտրոն, ապա՝ ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոն(այժմ այն գործում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կազմում):

1966թ. հունիսի 16-ին ՀԽՍՀ կառավարությունը որոշում է հիմնել Երևանի միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոց, ուսման տևողությունը 2 տարի էր, և շրջանավարտներին շնորհվում էր կրտսեր լեյտենանտի կոչում:

Ներքին գործերի համակարգի բարձրակարգ մասնագետների պատրաստման նոր, առավել առաջադեմ ձևերի, մեթոդների որոնումները շարունակվում էին: Այդ նկատառումով էլ 1985թ. ԽՍՀՄ ՆԳՆ միլիցիայի Երևանի դպրոցը լուծարվում է, և նրա հենքի վրա մեկ տարի անց ստեղծվում են ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն դասընթացները, որի առաջին պարապմունքներն սկսվում են 1986թ. նոյեմբերի 3-ին:

ՀՀ ՆԳ և ԱԱ նախարարության բարձրագույն դպրոցը բարձրագույն ուսումնական հաստատության է վերածվել նախկին ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն կուրսերի (1990-1991թ.) և դրան նախորդած նույն նախարարության միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոցի (1966-1990թթ.) բազայի հիման վրա, որը 1991-1995թթ. գործել է որպես ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոց, իսկ ՀՀ վարչապետի 1995թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոցն ու ՀՀ ՆԳՆ ներքին զորքերի բարձրագույն սպայական դպրոցը միաձուլվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցի:

2000 թ. օգոստոսի 18-ին ուսումնական հաստատությունը վերանվանվում է ՀՀ ՆԳ ակադեմիայի, իսկ 2011 թ. ապրիլի 28-ին՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

2013 թ. ՀՀ ՆԳ նախարարության կրթահամալիրին է հանձնվում ոստիկանության թանգարանը:

**Ռուբեն Սահակյան**
**Պատմական գիտությունների դոկտոր**
**Ռոստոմ Սարգսյան**
**տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, ոստիկանության գնդապետ**

# ԱՌԱՋԻՆԸ՝ ՎԱՆ, ՎԵՐՋԻՆԸ՝ ԵՐԵՎԱՆ

Երեկո էր. այցելեցի տատիկիս: Հնացած, բայց հյուրընկալ սեղանի շուրջ դարչինով թեյ վայելեցինք, համտեսեցի շատ համեղ հայկական ավանդական գաթան, հետո աչքս ընկավ գրապահարանին, հնամաշ գրքերի մեջ հետաքրքրեց «Հռոմից էլ մեծ» վերնագրով գիրքը, վերցրի ձեռքս ու տեղափոխվեցի պատմության գիրկը՝ Բիայնիլիի թագավորություն:

Սարդուրի, Ռուսա, Մենուա, Արգիշտի՝ Բիայնիլի թագավորության արքաներ, որոնք սկզբից պատկերացրին, ապա կառուցեցին Էրեբունին:

12-րդ մայրաքաղաք Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է: Ուրարտական Արգիշտի առաջին արքան այն հիմնել է մեր թվարկությունից առաջ 782 թվականին, երբ նա առաջին քարը դրեց Էրեբունի բերդաքաղաքի հիմքում: Այժմ Էրեբունին քաղաքի հարավային ծայրամասում է:

1950 թվականին Արին-Բերդ բլրի վրա գտնված սեպագիր արձանագրությունում գրված է. «Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնա երկրի և ի սարսափ թշնամիների»: Արգիշտին ասում է. «Հողն ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի՝ Մենուայի որդի, արքա հզոր, արքա Բիայնա երկրի, տերը Տուշպա քաղաքի»:

Երևան քաղաքի ստեղծումը և անվանումը, ինչպես շատ ուրիշ հին ու նոր քաղաքների, կապված է նաև հին լեգենդի հետ: Եթե Հռոմը հիմնադրել են Հռումուլոս ու Հռեմոս եղբայրները, Աթենքի անվանումը կապում են աստվածուհի Աֆինա Պալլադայի հետ, ապա Երևանի անվանումն ավանդաբար կապում են Մեծ ջրհեղեղի և Նոյյան տապանի հետ:

Ըստ ավանդության՝ երբ Նոյյան տապանը ջրհեղեղից հետո կանգ առավ Արարատի գագաթին, Նոյը դուրս եկավ տապանից իր երեք որդիների, հարսների և թոռների հետ ու նայեց շուրջբոլորը: Ջուրը հետ էր քաշվել, և ինչ-որ բան տեսավ հեռվում: Նոյն ուրախացավ, ձեռքը մեկնեց այդ կողմ և բացականչեց՝ երևա~ց, երևա~ց... Նա նկատի ուներ ցամաքը: Պատմում են, որ հենց այդ բարձրադիր տարածքում հետագայում կառուցեցին քաղաք, որի անունն էլ դրեցին Երևան:

Այս արևառատ քաղաքում կա ամեն ինչ՝ թանգարաններ, մշակութային կենտրոններ, հնաոճ և ավանգարդ սրճարաններ ու ռեստորաններ: Գրեթե ամեն օր այստեղ բեմադրվում են ամենատարբեր ժանրերի ներկայացումներ և կազմակերպվում համերգներ՝ դասականից մինչև ժամանակակից: Ընդ որում, հաճախ մշակութային միջոցառումներն ու փառատոներն անցկացվում են երևանյան ջերմ երկնքի տակ:

Հենց այսպիսի մի երևանյան երեկո էր, երբ ծանոթացա մի օտարերկրացի զբոսաշրջիկի հետ, որ շատ լավ գիտեր Հայաստանի պատմությունն ու Հայաստանն անվանում էր «թափառող մայրաքաղաքների երկիր»: Սա շատ խորիմաստ բնութագրում է: Իր բազմաչարչար պատմության ընթացքում Հայաստանն իսկապես շատ մայրաքաղաքներ է փոխել: Դա ոչ թե երջանիկ ու խաղաղ կյանքի արդյունք է, այլ ապացույց, որ հնագույն ժամանակներից մինչև այսօր մեր երկիրն անցել է պայքարի և հակամարտության երկար ու դժվար ճանապարհ, տեսել պատերազմներ, արշավանքներ, արյուն, կոտորած, գաղթ:

Մեծաչարչար հայ հողի վրա ստեղծվում և քանդվում էին թագավորություններ և իշխանություններ, իսկ նրանց հետ մեկտեղ՝ մայրաքաղաքները: Եթե հաշվի չառնենք ժամանակավոր գահանիստ քաղաքներն ու փոքրիկ ավատատիրական իշխանությունների մայրաքաղաքները (նրանք բավականին շատ են եղել), Հայաստանն ունեցել է տասներկու մայրաքաղաք:

**Տես՝ էջ 6**

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

### ՀԵՐԹԻՑ՝ ՄԵԾ ԿՅԱՆՔ

Ես կանգնել էի մի մեծ հերթում,
Շուրջս՝ գարուն, շուրջս՝ արև,
Կյանքն իմ գիրքն էր անփույթ քերթում,
Ես ծգտում էի անվերջ վերև:
Ճակատագրի չար հեգնանքով
Հերթս ծգվեց ու երկարեց,
Մեկն շտապեց, անցավ վազքով,
Ինձ հետ կյանքը լուռ համբերեց:
Սպասումի մեջ հենց նույն հերթում
Գտա մարդկանց՝ հերթից էլ քանի,
Նրանց սերն ինձ պահեց շարքում,
Տաղտուկ հերթը դարձրինք խենթ կյանք:
Հիմա արդեն ինձ ժպտում է մի ծույլ աչուն,
Հերթը փոխվել, տե՛ս, նորերն են մեր առջևում,
Չենք ափսոսում անցած ճամփան,
Անցնելիքն է թավ մշուշում,
Բախտը ծերն էր, իմը՝ հերթը,
Ես իր հետ եմ կյանքս մաշում:

Մուշեղ Բաբայան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր

### ԵՍ ՏԵՍԱ ՔԵԶ



Ես քեզ տեսա՝ ամռան վերջն էր,
Տեսա հանգիստ, պատռահական,
Տեսա ու նոր ես իմացա,
Որ չի մեռնում կյանքն անցյալում:
Դեռ կա ներկա ու ապագա:
Նայեցի ես քո աչքերին, տեսա մի լույս,
Որ վառվում էր խավարի մեջ այնպես աղոտ,
Ասես կյանքի փարոս է նա,
Ինչպես ուղին այն հեռավոր երազանքի,
Որ էլ չկա, որ մարել է իմ հոգու մեջ:
Եվ փորձեցի նորից քայլել
Մեր այս կյանքի լաբիրինթով՝
Որոնելով լույսն այն աղոտ, ու…
Ես գտա, գտա ես քեզ,
Գտա ես քեզ ու հասկացա,
Որ դեռ ուշ չէ,
Դեռ կարող եմ մեկին սիրել ,
Սիրել մաքուր, սիրել անկեղծ…
Եկավ աշուն, հետո՝ ձմեռ.
Մեր բաժանման առավոտը ծյուն էր եկել,
Ես արթնացա ու փնտրեցի
Քո աչքերի լույսը հեռվում,
Որ մարել էր ու չէր վառվում:

Սոնա Ղուկասյան
Քոլեջի ոստիկանական միջին
մասնագիտական
կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի
սովորող,
ոստիկանության սերժանտ

## ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ



Մենք՝ հայերս, դարեր շարունակ մաքառելով պահպանել ենք մեր գոյությունը, ստածողությունը, մշակույթը, երգերն ու գրքերը: Մեր պետության հիմն ու հիմնարար արժեքներից մեկը պատիվն է: Այն կարծես հայի հետ է ծնվել ու դարերի հետ ավելի է կարևորվել:

Այժմ կառուցում ենք ամուր և զարգացած պետություն՝ պահպանելով մեր ազգային տեսակն ու ստածողությունը: Եվ պատկերացրեք՝ որքա՜ն պատվաբեր է պահպանել հենց այդ արժեքները, պաշտպանել այդ արժեքները կրող ժողովրդին:

Պատվաբեր և պատասխանատու է լինել ոստիկան: Պատասխանատվություն եմ զգում հայ ժողովրդի մնայուն արժեքների, անվտանգության պահպանման առաջ: Սանկությունից լսել եմ Կոմիտաս, սնվել Թումանյանի հեքիաթներով, ունեմ ընտանիք, որի նախնիները եղել են իրենց կյանքի գնով մեր գրքերի ամեն մի էջը որպես սուրբ մասունք պահպանողներ, եղել են հայրենասեր ու ազգանվեր, իսկ ինձ մնում է այս քաղաքակիրթ երկրում շարունակել նրանց նվիրական առաքելությունը:

Որոշեցի ծառայել հայրենիքիս, ազգիս, պետությանս: Յուրաքանչյուրս պետք է պահպանի ու զարգացնի մեծ դժվարությամբ ստեղծված մեր պետությունը: Օր օրի հմտանալով և կոփվելով որպես ոստիկան՝ ես ավելի եմ արժևորում իմ ծառայությունը, գիտակցում ժողովրդավար պետությանը, հասարակությանը պաշտպանելու և նրա բնականոն կյանքն ապահովելու կարևորությունը:

Պատվաբեր է լինել սուրբ հայրենիքի երազող ու նուրբ, բայց և շատ ուժեղ ու անվախ պահապաններից մեկը:

Հասմիկ Մարտիրոսյան
Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի
2-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ

## ԱՌԱՋԻՆԸ՝ ՎԱՆ, ՎԵՐՋԻՆԸ՝ ԵՐԵՎԱՆ

Սկիզբը՝ էջ 5

Առաջինը Վանն էր (Տուշպան)՝ Արարատյան (Ուրարտու) թագավորության մայրաքաղաքը, որին հաջորդեցին Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Դվինը, Երազգավորսը, Կարսը, Անին և այլն, ի վերջո՝ Երևանը:

Կարծում եմ՝ մեր քաղաքի շունչն ու բույրը լիարժեք զգալու համար յուրաքանչյուր մարդ, որ գալիս է Երևան, պարտադիր պետք է.

Այցելի Էրեբունի ամրոց-պատմամշակութային թանգարան:

Հանրապետության հրապարակում վայելի երգող շատրվանների երաժշտությունն ու գունազեղությունը, լուսանկարի լապտերներով լուսավորված կառավարական շենքերի հիասքանչ տեսարանը:

Այցելի Մատենադարան, որն աշխարհում հնագույն ձեռագիր մատյանների խոշորագույն հավաքածուների հանգրվանն է, և այն մշտապես համալրվում է, ձեռագրերը՝ վերականգնվում:

Համտեսի խորոված՝ բանջարեղենով և տնական գինով, հատկապես երիտասարդ գինով՝ մաճառով: Հայերի համար խորովածն ավելին է, քան պարզապես խորոված միսը: Սա մի ամբողջ ծիսակարգ է, որը ծանոթ է յուրաքանչյուր հայ ընտանիքի և համարվում է մեր հյուրասիրության անբաժան մասը:

Զբոսնի Կասկադ ճարտարապետամշակութային համալիրի տարածքում: Կաքնագույն տուֆից կառուցած այս հոյակերտ շինությունը ծաղկաքմբերով, շատրվաններով և գիշերային լուսավորությամբ կապվում է Հաղթանակի զբոսայգու հետ: Հինգ մակարդակներից յուրաքանչյուրը զարդարված է յուրօրինակ քանդակներով, համալիրի շենքում կան մի քանի ցուցասրահներ, որտեղ ցուցադրվում են աշխարհի տարբեր ծայրերից բերված ցուցանմուշներ: Իսկ վերջում չպետք է մոռանա Կասկադի տարածքում տեղակայված սրճարաններից մեկում մի բաժակ քեյով վայելել երևանյան կեսգիշերը. չէ որ այն այնքան մաքուր, պարզ ու, այս ամենի հետ մեկտեղ, առեղծվածային է:

Հեռախոսս զանգեց. ժպիտով փակեցի գիրքս ու հիշեցի հայտնի երգի բառերը. «Երևանը տուն ու շենք չէ, Երևանը մենք ենք...»: Այո՛, անշուշտ, ինչպես Երևանի, այնպես էլ Հայաստանի գլխավոր կապիտալը մարդիկ են՝ հոգատար, հյուրասեր, բարեհամբույր և սրտացավ:

Մարիետա Խեբանյան
Գիտական աշխատանքների բաժնի
գիտաշխատող,
ոստիկանության լեյտենանտ

## ԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ

Եթե նա չլիներ վառ անհատականություն, դժվար թե իրավունք վերապահեի պատմելու բոլորին այս խիզախ հրամանատարի մասին: Առաջին հայացքից մի սովորական մանուկ էր, որ ծնվել ու իր մանկությունն էր վայելել Մշո երկրում: Դժվար է պատկերացնել, թե ինչ կդառնար Արտեմ Հակոբյանը, եթե չլիներ Մեծ եղեռնը, չտեսներ հոր մահը գաղթի ճամփին, չտեսներ, թե ինչպես է 4 տարեկան քույրն ընկնում Եփրատ գետը, չտեսներ իր մոր տառապանքներն ու չընկներ մանկատուն: Բայց դժբախտություններն ու դժվարությունները չսպանեցին նրա մանկական հոգին, չկոտրեցին նրան, այլ, հակառակը, դարձրին էլ ավելի ուժեղ, ինչը դրսևորվեց նրա հետագա գործողություններում: 1923 թվականին Ա. Հակոբյանը եկավ Երևան և դարձավ շարքային մարտիկ: Արտակարգ ունակությունների և ռազմական գործը սիրելու համար 1924 թվականին Արտեմը գործուղվեց նախ՝ Բաքվի ռազմահետևակային դպրոց, ապա՝ Կրասնոդարի հեծելազորայինների հրամկազմի կուրսեր: Ու այսպես սկսվեց հեծյալների խիզախ հրամանատարի հերոսացման ճանապարհը: Նույն տարում, ավարտելով ռազմական դպրոցը, ծառայեց Անդրկովկասյան ռազմական օկրուգի 17-րդ լեռնահեծելազորային դիվիզիայի հեծյալ գնդում որպես դասակի հրամանատար, ապա՝ էսկադրոնի հրամանատար, իսկ 1938թ. ծառայության անցավ Միջինասիական ռազմական օկրուգում: 1941թ. հունիսին, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Ա. Հակոբյանը նշանակվեց հեծելագնդի հրամանատարի պաշտոնակատար, իսկ 1942 թ.՝ հեծելազորային գնդի հրամանատար: Հոկտեմբերի 10-ից 61-րդ հեծելազորային դիվիզիայի կազմում Հակոբյանի իր 218-րդ հեծելագնդով մեկնեց ռազմաճակատ և 8 ամիսների ընթացքում արյունահեղ մարտեր մղեց ֆաշիստական զորքերի դեմ Ստալինգրադյան և հարավային ռազմաճակատներում: 1942թ. դեկտեմբերի 12-ին նա վիրավորվեց, բայց չհեռացավ մարտադաշտից: 61-րդ դիվիզիայի հրամանատար Ստավենկովը Հակոբյանին փոխգնդապետի կոչում շնորհելու առթիվ գրել է. «Ա. Հակոբյանը գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերում, դեկավարելով հեծելագունդը, դրսևորվեց որպես տակտիկապես գրագետ հրամանատար: Վիրավորված լինելով՝ մնաց շարքերում և շարունակեց ղեկավարել գնդի մարտերը: Անձամբ 3 անգամ գնդին տարավ հեծելագրոհային գրոհի, որտեղ ինքը քրատեց մոտ 20 հիտլերականների: Փոխգնդապետ Հակոբյանի գունդը և ինքն անձամբ բարձր պատրաստատակտիկական օրինակ ցույց տվին և նշանակալի հաջողություն ունեցան Սոլենո, Կուրգանի, Ռոմանելն գյուղերի և Արգոնեյում քաղաքի համար մղված մարտերում»:

Ստալինգրադյան և հարավային ռազմաճակատներում ցուցաբերած խիզախության համար Ա. Հակոբյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով և Ստալինգրադի պաշտպանության համար մեդալով:

Արժանահիշատակ է այն փաստը, որ իր խելացի ռազմավարության շնորհիվ Ա. Հակոբյանի գունդը մեծ կորուստներ երբեք չի ունեցել: 1943 թ. հունիսին նրան գործուղեցին Մոսկվա, իսկ նույն թվականի օգոստոսին՝ Մ. Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիա: 1944թ. ավարտելով ակադեմիայի կուրսերը՝ նա գործուղվեց 3-րդ Բելառուսական ռազմաճակատ: Հունիսի 28-ին, ներկայանալով կառողի մարտերում զոհված 32-րդ Սմոլենսկյան կարմրադրոշ, Սուվորովի և Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանակիր հեծյալ դիվիզիայի հրամանատարությանը, նշանակվում է Լեբեդևո բնակավայրում դիրքավորված 121-րդ կարմրադրոշ գնդի հրամանատար: 1944թ. հուլիսի 3-ին սովետական զորքերն ազատագրեցին Բելառուսիայի մայրաքաղաք Մինսկը: Հիտլերականները վիրավոր գազանի կատաղությամբ կառչում էին յուրաքանչյուր մետր հողից: Այդ օրերին հյուսիսարևմտյան հատվածում գործող 32-րդ հեծյալ դիվիզիայի առջև խնդիր էր դրված՝ արագ գործողություններով ոչնչացնել հակառակորդի զորամասերը և Բերեզինա գետի վրա՝ Բորիսով քաղաքից հարավ, անցումի բացել դիվիզիայի համար: Փոխգնդապետ Հակոբյանը դարձավ այդ մարտերի հերոսը: Նրա գունդն առաջինը դուրս եկավ Բերեզինա գետը և շեշտակի գրոհով գրավեց կամուրջը: Հուլիսի 4-ին գունդը մարտեր էր մղում Մոլոդեչնո քաղաքի համար՝ ծգտելով շրջափակելով փակել ճանապարհը և շրջապատման ռեալ վտանգ ստեղծել քաղաքում գտնվող թշնամու համար: Շրջանցումն կատարվեց Լեբեդևո բնակավայրում, այնուհետև, գրավելով կամուրջը, գունդը թշնամու կողից Մոլոդեչնո-Սմարգոն երկաթգիծը: Գերմանացիները, վախենալով ջախջախվելուց, սկսեցին հապճեպ նահանջել: Այդ ժամանակ փոխգնդապետ Հակոբյանը գրոհի հանեց գունդը և մյուս զորամասերի համագործակցությամբ ավարտեց հակառակորդի ջախջախումը: Սակայն այդ մարտը ճակատագրական եղավ Ա. Հակոբյանի համար: Նա, գլխից ծանր վիրավորվելով, հենց կռվի դաշտում ընկավ հերոսի մահով:

ԽՍՀՄ գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ա. Հակոբյանը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով: Այսպես ավարտեց 36-ամյա իր կյանքը հեծյալ գնդի խիզախ հրամանատար, փոխգնդապետ Արտեմ Հակոբյանը: Նա չտեսավ մեծ հաղթանակը, բայց նրա գունդը, նրա մարտիկներն անկոտրում հրամանատարի թուրը բարձրացրին Բեռլինում:

Անցել են շատ երկար ու ձիգ տարիներ, բայց, միևնույն է, ոչ ոք չի մոռացվել, և ոչինչ չի մոռացվի: Նրանք միշտ մեր սրտերում են: Մենք կգնանք, բայց նրանք միշտ կան ու կլինեն:

Ես շնորհակալ եմ Աստծուն և անչափ հպարտ եմ, որ իմ երակներում հոսում է այս խիզախ հայրորդու արյունը:

Սառա Մխիթարյան
Ուսումնական գործընթացի կազմակերպման
և վերահսկման բաժնի ավագ տեսուչ,
ոստիկանության կապիտան

## ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ



1. Արևելյան առակներից մեկի համաձայն՝ մի տղամարդ գալիս է իմաստունի մոտ և խորհուրդ հարցնում. «Իմ տուն մշտապես գալիս են տարբեր մարդիկ և խլում իմ քանի ժամանակը: Ինչպե՞ս ես կարող եմ ձերբազատվել նրանց այդքան հաճախակի ու անցանկալի այցելություններից»: Իմաստունն այդ տղամարդուն խորհուրդ է տալիս կատարել երկու հակադարձ գործողություններից մեկը՝ կախված նրանից՝ հյուրը հարու՞ստ է, թե՞ աղքատ: Ասացե՛ք այդ գործողությունները:

2. 1925 թվականին Հերբերտ Չեպմենը սկսեց որպես մարզիչ աշխատել անգլիական «The Arsenal» ֆուտբոլային ակումբում: Նա խոստացավ ակումբի ղեկավարությանը, որ դեռևս մինչև Անգլիայի առաջնության մեկնարկն իրենց ակումբը կբարձրանա մրցաշարային աղյուսակի առաջին հորիզոնական: Ի՞նչ արեց Հերբերտ Չեպմենն իր խոստումը պահելու համար:

3. Ինչպե՞ս հասարակ մատիտի օգնությամբ կարելի է հեշտությամբ ապացուցել, որ խոսքի ազատությունը ճնշել հնարավոր չէ, քանի որ կստացվի հակառակ արդյունքը:

Պատասխանները

.......................................................................

1. Իմաստունը խորհուրդ տվեց հարուստից պարտքով փող խնդրել, իսկ աղքատին պարտքով փող տալ:

2. Նա ակումբը վերանվանեց «Arsenal», և ակումբը զրոյական մրցաշարային աղյուսակում այբբենական կարգով զբաղեցրեց առաջին հորիզոնականը:

3. Մատիտը կոտրելու միջոցով: Խոսքի ազատությունը ճնշելու համար անհրաժեշտ է կոտրել մատիտը, սակայն այդ դեպքում մատիտի երկու կեսերից յուրաքանչյուրը կդառնա ինքնուրույն մատիտ, և դրանց թիվը, փաստորեն, կկրկնապատկվի:

.......................................................................

Հարցերը կազմեց
Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 11. 2018թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: